

Գ Ա Յ Յ Ր Ե Ն Ի Ք

10
Փարայ

ՕՐԱԹԵՐԹ

10
Փարայ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հարեմիր ամեն օր կը հրատարակուի, տարեկան գինն է Պոլսոյ եւ գասաուաց համար 7 արծաթ մեծիտ կանխիկ. գասաուական բոլոր տարուրեան ծախքը մեր վրայ է: Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանարար այ կը նուազանայ:

Լրագրոյս վերաբերեալ գիր կամ նամակ պետք է ուղղել առ Տեր-Խմբագիր Քիզա փառա խան Թ. 14: Խմբագրութեան ուղղեալ գիր եւ ընտրուի: Ծանուցման տողը մեկ անգամի համար 3 դրուշ է. աւելի անգամի համար սակարկութիւն կը լայ:

Ն Ե Ր Ք Ի Ն

Հազարգաթ թուրք լրագիրը հետեւեալ դէպքեր կը հրատարակէ:

«Սօվուզ-Պուլսի (Պարսկաստան) քիւրա երեւելիները և իւլէմայները վերջին օրերս Պարսից վէզիր Յուսէֆի դիմելով, խնդրել են որ ֆիւրտիստանի մզկիթները և մէտրէսէները որք տարիէ մ'ի վեր Պարսից կառավարութեան հրամանաւ դոցուած էին, վերստին բանալու հրաման տայ: Վէզիրը ասոր վրայ բարկանալով, քիւրտերուն բոլոր մզկիթները և մէտրէսէները ուժարկած եւ հրամայել է: Ռեալիզմութեան ատեն զինուորներուն հրաման տրուել է որ փախող քիւրտերն արշիւղելու համար զէնք դուրս տան, ուստի փախողներէն որոնք որ բռնուել են, թրէ անցել են:

«Սօվուզ-Պուլսի Եթիպա-Իսլամը, Գատրն և Մուֆթիին ալ թրէ անցել են: Ահա ասոր համար է որ Եթիպի Հաքիմ Ապտուլլահ խան 6000 հոգիով օսմանեան հողը Նէհրի ապստաններ է. իսկ Սօվուզ-Պուլսի և ուրիշ տեղերու բաղամթիւ քիւրա ընտանիքներ Մուսուլ սպաստաններ են»:

— Դատական գործոց նախարարութիւնը, Նաբուլի մէջ իսթիքալ անուն լրագիրն հրատարակող Եթիքաթի էֆէն, ախի Պոլսոյ մէջ ունեցած կալուածները յարբուսիս գրաւել է:

— Սթամպուլ կրտէ թէ Բէճէպ անուն մասվաճառ մը Պէրքոզի մօտերը երեք աւազակի հանդիպելով, յանդիմանեցին զայն իբր թէ այս վերջինը զիրենք կառավարութեան մատնելու գիտաւորութիւն ունենալուն համար, և զանիկալաւ մը ձեռքէ վերջը սկանջին մէկը կտրեցին:

— Վերջին փոթորիկը Սև ծովու և Ազախու ծովին մէջ մեծամեծ վնասներ հասուցել է. Պուրղազի, Վարնայի և Ազախու մէջ բաւական նաւեր կորսուել են:

— Յընտքըը հաճի Մէհմէտ անուն տաճիկ մը կերակի օր իւր կինը չափազանց ձեռնուելով, այս վերջինը տունէն փախել է մօտակայ պահականոցն երթալով, կառավարութեան զթուրիւնը

խնդրելու համար. սակայն ճամբան խեղճ կինը յանկարծ իյնալով, կաթ ու ածամահ եղեր է, Վայրագ ամուսինն անմիջապէս բռնուել և ոստիկանութեան յանձնուել է:

— Բ. Դուռը որոշել է կուսակալ գանուած գաւառները միւթէսարըֆութիւնը վերահաստատել որ Մահմուտ փաշայի Մեծ Եպարքութեան օրով ջնջուած էր:

Սոյն կարգադրութիւնը տարեկան 430 հազար ոսկոյ ծախք մը աւելցուց տէրութեան Պիւտեքին մէջ:

— Կերևի թէ ճակատագիրը Եթիպի-Չատէ Բեասիմ փաշան կը հալածէ:

Լէվանթ կը գրէ թէ Պասրայէն տասը նոյնից և 5000 ոսկի զրկուելով փաշային, Չորի և Հալէպի մէջտեղ աւազակներու օրս եղեր են. ձիերէն եօթը միայն կրցել են ազատիլ:

— Գերմանական դպրոցի երաժշտութեան ուսուցիչ Պ. Փոլ Լանթ շաբաթ իրիկուն կայսերական պալատն հրաւիրուել է մասնաւոր նուագահանդէսի մը խմբին մասնակցելու համար, ուր ներկայ կը գտնուէին կայսրորդին իւր, եղբայրը և կայսերական ընտանիքէն քանի մը հոգի: Պ. Փոլ նոյն գիշերը դաշնակ զարկել է:

— Գանձուց պաշտօնէութեան քարտուղարներէն Ալի Խաթէմի էֆէնտի, Պոլսոյ Թրամուէյէն կոնտոուելով, ծանրը վէրք մ'ընդունել և վերաբուժական գործողութեանէ մը վերջը մեռել է:

Սա այրի մը և երեք որը կը թողու:

— Էվթիմոս և Տիմիթի անուն երկու մասվաճառ որը Գատրգիւղի նաւամատոյցի մզկիթին մօտ խանութ մը բացած էին, իրենց բարեկամներէն Նիքօլի անուն անձ մը անցեալ իրիկուն խանութին կը հրաւիրեն մէկտեղ զբօսնելու համար: Այս հրաւերը բարեկամական չէր. սակայն Նիքօլի չկրնալով թափանցել, որոշեալ ժամուն հոն կերթայ, ուր ուտելէ և խմելէ վերջը երկու մասվաճառները Նիքօլի վրայ կը յարձակին, ոտքը և ձեռքը կը կտան, կը ձեռն և կսպառնան զինքն սպաննել, և թէ գրպանը գտնուած 28 ոսկին իրենց չը յանձնէ: Սակայն այս ամենը բաւական

աղմուկ յարուցանելով և դրացեայ ահանջն հասնելով, այս վերջինները ոստիկանութեան կիմացնեն, որ անմիջապէս վրայ հասնելով շարագործները կը բռնէ և իւսկիւտարի պահականոցը կը զրկէ:

— Պրուսայէն Լէվանթի դրուած նամակ մը Էնկիւրի սովը շատ տխուր կը նկարագրէ, և այս աղէտէն պատճառած բաղմագիտի վնասները կը յիշէ. Էնկիւրիի գիւղերէն բաղմաթիւ ժողովուրդը դունդազուկ Պրուսա կը գաղթեն եղբ հաց գտնելու համար:

Այս ահաւոր սովին վրայ աւելցնելով Չէրքէզներու աւարառութիւնները որք Պրուսայի և Իզմիտի շուրջը կը տեղան, շատ տխուր պատկեր մը երևան կելնէ. գիւղացի ժողովուրդը իւր ձեռքը գլուխուած արմտիքը որ շատ նուազ է այս տարի, քաղաք այն է Պրուսա կամ Իզմիտ փոխադրելու անկարելիութեան մէջ կը գտնուի, վասն զի ճամբայները Չէրքէզներով լծցուն են և մարդ չհամարձակիր դուրս ելնել, հետեաբար ժողովուրդը անօթի կը տառապի:

Մեր այս ըսածը կը հաստատէ Իզմիտի փոխ-Առաջնորդ Արթ. Տ. Ստեփան վարդապետի պատահած վերջին դէպքը զոր քանի մ'օր առաջ հրատարակեցինք, Եթէ Չէրքէզներու գործած աւարառութիւնները հրատարակելու ելնենք, լրագիր մը կրնայ լցուիլ ամեն օր:

Ս. Լ. Պ. Ա. Ն. Ի. Ա.

Լէվանթ Տէրվիշ փաշայի նկատմամբ հետեւեալ տողերը կը գրէ:

«Այն լուրը որ կը ծանուցանէր թէ Տէրվիշ փաշա իւր Բէտիֆ զօրքերը հայրենիքին զրկած էր, այնպէս ենթադրել տուաւ թէ վերին Ալպանիոյ տիրած է. և սակայն այս ենթադրութիւնը բընաւ չհամապատասխաներ Բիքրէնէն մեր ստացած տեղեկութեանց, ուր Տէրվիշ փաշա իւր բանակակերպոնն հաստատած է այժմ: Ստոյգ է որ Տէրվիշ փաշա իւր Բէտիֆները ճամբեր է, բայց միւս կողմանէ Թեսաղիոյ և Մանասթրի նիզամներն իրեն օգնութեան զրկուել են: Իսկ ալպանիացի պարագլուխը կամ անոնցմէ գոնէ մի քանին ապստամբու-

Թիւնը կը շարունակեն և մինչև իսկ կը ըսուի թէ կանոնաւոր զօրաց դէժ յարձակման յատակագրի մը պատրաստութեան Ծէրվիչ փաշա ապստամբութեանց այս որոշումն իմանալով, բաւական ըստուար զօրութիւն մը հաւաքելու և Ալպանիացիները հնազանդեցնելու կամ զանոնք ջախջախելու համար եթէ ընդդիմութիւններ շարունակեն: Միւս կողմանէ տեղեկութիւն կուտան մեզ թէ ստուգիւ Ալպանիացիք ալ հետզհետէ նորանոր օգնութիւններ կընդունին. սակայն սխալ է այն լուրը թէ արտաքին ազդեցութիւններ ալ մեծ դեր կը խաղան սոյն ապստամբական շարժման մէջ»:

ՄԱՐԴԱՍՊԱՆ ԿԻԹՕ

Կարֆիլտ զօրավարին մահը իւր ըսպանչին դատաստանը անմիջապէս տեսնելու պատճառ եղաւ: Ամերիկայի օրէնքով, սպանչին վիճակը այն ատեն կը որոշուի երբ սպանելոյն վիճակը որոշուի: Եթէ նախագահը առողջանար, Կիթօ երեք տարուան բանտարկութեամբ պիտի ազատէր. վասն զի մարդասպանութեան փորձ մը միայն ըրած պիտի ըլլար:

Հակառակ պարագայի մէջ մարդասպանը ինքն ալ կախաղան կելնէ. սակայն Ամերիկայի օրէնսդրութիւնը պիտի թոյլատրէ ամբաստանելոյն փաստաբանին որ իւր պաշտպանելոյն կեանքը վրկէ, թէև յաջողութեան յոյս մը չերևիր մեզ:

Ոճիւրը Գոլմպիայի մէջ գործուած ըլլալով, տեղոյն օրինաց համեմատ պիտի դատուի սպանիչը. սակայն Կարֆիլտ նախագահը Նիւ-ժէրսէի մէջ մեղանելով օւր փոխադրուած էր, փաստաբանը օրինաւորապէս կընայ պնդել թէ Գոլմպիայի մէջ սպանութիւն եղած չէ, այլ պարզապէս վէրք մը, և ասիկա ի մահ չդատապարտեր զԿիթօ:

Այսպիսի օրէնսդրութիւն մը արդարեւ զարմանալի կը թուի Եւրոպայի, բայց Ամերիկայի մէջ ասոր նմանը պատահած և դատարանն ըստ օրինի չէ կրցած մերժել:

Արդ Կիթօի ի մահ դատապարտուելու մասին կասկածներ սկսած են ծագիլ, մանաւանդ թէ հարկ ելած 12 դատաւորը մէկտեղ բերելու դժուարութիւն կայ: Ասկէ զատ եթէ պահանջուած դատաւորները մէկտեղ ալ գան, պէտք է որ յանցաւորութիւնը միաձայնութեամբ վճռեն:

Սակայն եթէ սպանիչը մտհուանէ ազատի, բոլորովին ազատ պիտի կարենայ ըլլալ: Այս մասին, այո, չեմք կրնար ըսել, քանի որ հասարակաց մտքերը այս միջոցիս շատ զայրացած են: Արդէն նախագահը դեռ չմեռած պահպանին մէկը Կիթօի վրայ հրացան պարպած էր բանտին մէջ: Ասկէ զատ խուճի մը մարդիկ որոշեր են ի պահանջել հարկին Կիթօն սպաննել. ասոր համար կառավարութիւնը կը հսկէ:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀՈՄ ԴՊՐՈՑ ԻՒՍԿԻՏԱՐ

Աղջկանց յարգոյ ծնողք՝ որ կը փափաքին այս դպրոցին մեծամեծ առաւելութիւնները ստուգել, կը հրաւիրուին անձամբ գալ և տեսնել որ ատեն որ կուղեն, բայց ի կիրակի օրերէ:

Գիշերօթիկ աշակերտը կը վճարեն 30 լիրա տարեկան, այսինքն 12 լիրա՝ սեպտեմբեր, 9 լիրա յունուարին, և 9 լիրա Չատկին:

Անոնք որ գիշերօթիկ չեն, բայց կէս օրուն ճաշը կընդունին դպրոցէն՝ վճարելու են 8 լիրա տարեկան, այսինքն, 3 լիրա սեպտեմբեր, 3 լիրա յունուարին, և 2 լիրա Չատկին: Բայց անոնք որ ճաշ չեն ընդունիր դպրոցէն՝ վճարելու են այս գումարներուն կէսը:

Գաշնակ սորվել ուղղուններն պիտի վճարեն տարեկան 8 լիրա, այսինքն 3 լիրա սեպտեմբեր, 3 լիրա յունուարին, և 2 լիրա Չատկին:

Մնողաց ուշագրութիւնը կը հրաւիրենք պայմանաժամերուն վճարմանց կանխիկ ըլլալու կանոնին, որ ճշդիւ պահուելու է:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալները «Հայրենիքի» մէջ հրատարակած էինք Ատանայէն թղթակցութիւն մը, որ Միացեալ ընկերութեանց տեսչութեանը յանձնուած տեղական վարժարանաց բարեկարգութեան պէտք ունենալը կը կը յայտնէր: Այժմ կը լսեմք թէ Միացեալ ընկերութեանց Տընօրէն ժողովն առդէն բանակցութեան մէջ է արժանաւոր դասատուաց հետ, Ատանա զրկելու համար զանոնք, կը յուսամք որ Ատանայիք ալ պիտի փութան իրենց պայմանագրեալ գումարը ժամանակին հատուցանել յիշեալ ընկերութեան, զի կը լսեմք թէ պայմանաժամը ամիսներէ ի վեր անցած և խոստացեալ գումարը ցարդ չէ վճարուած:

Պ. Մ. ֆորթուղալեան այսօր վաղը մայրաքաղաքս կը հասնի:

Երէկուան գաղղիախօս և թրքախօս լրագիրները Ամասեան էֆի զստեր և Պէկեան Թաղէոս էֆի ամուսնոյն Տիկին Մարկէրէթի նկատմամբ մեր քանի մ'օր առտլ զրած տողերը կը հաստատեն, ըսելով թէ Մարկէրէթ հակառակ ոստիկանութեան խուզարկութեանց, մինչև այսօր գտնուած չէ, թէ Թօմազօ ցարդ բանտարկուած է և թէ խել մ'անձինք ալ հարցաքննութեան ենթարկուած են:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարիցա լրագիրը Սելանիկէն ընդունած հետեւեալ ծանրակշիռ լուրը կը հրատարակէ:

Այս շաբթու եէնիճէ քաղաքին կիւմէնճէ գիւղէն ուր 400 տուն կը գտնուի, 247 Պուլղար ընտանիք յունական կղերին հարստահարութեանց ալ ևս չկարենալով դիմանալ, կաթոլիկութիւնն ըն-

դուներ են: Ասկէ իբր 20 տարի առաջ ալ երբ Պուլղարը նոր շարժման կսկսէին, յոյն եպիսկոպոսները Գուլքուչի Պուլղարներն հալածելով, ասոնցմէ բազմաթիւ ընտանիք Հոռովճական եկեղեցւոյն յարեցան:

— Վազըթ իւր այս աւուր տեսութեան մէջ Հունգարական թերթերուն Աւստրիոյ թելագրութեամբ Օսմանեան պետութեան դէմ յօդուածներ գրելու մասին կը գանդատի, և սակայն կըսէ, Աւստրիա զուր տեղը կը ջանայ Հունգարացւոց առ Օսմանցիս ունեցած համակրութիւնը այսպիսի միջոցներով նըւազեցնել:

— Դարձեալ Վազըթ կըսէ թէ Պուլղարիոյ տուրքին քանակութիւնը որոշելու մասին Ռուսիոյ ցուցած անտարբերութիւնը մեծ զարմանք կը պատճառէ մինչդեռ Սօֆիայի բոլոր հիւպատոսները այս խնդրոյն համար կը բանակցին, Ռուսիոյ հիւպատոսը բնաւ չխառնուիլ եղեր:

— Փարոսներու և նաւահանգստիս ծովափանց քարայէն նաւամատոյցներու արտօնատէր Միշէլ փաշա երէկ Մարսիլիա մեկնեցաւ:

— Պօն տիւ թրէզօր անուամբ չըջաբերութեան հանուած արժեւորմանը տէրերը սաստկապէս կը բողբեն, կըսէ Վազըթ, Պուլղար գանձային բանակցութեան ժողովին որոշմանց դէմ: Պ. Պուլքի Լոնտրա զրկած նամակը բնաւ ազդեցութիւն մը չէ ըրեր այս բողբները դադարեցնելու համար:

— Պուլքուչի սպանիական դեսպան, Տօն ճիւղան կոմսը, որ մայրաքաղաքս կը գտնուէր, երէկ Պուլքուչի մեկնեցաւ իւր մեկնելէն քանի մը ժամ առաջ հեռագրաւ լուր ուսաւ թէ 60000 Ֆր. ի վիճակահանութեան պարգև մը շահած է:

— Պաշտօնապէս կը ծանուցուի թէ Եգիպտոսի զօրաց Խըտիլին դէմ ըրած գանդատները քննելու և Խտիլին հետ համաձայնութեամբ եղելութիւնը Բ. Դըրան հաղորդելու համար, կիրակի երեկոյ, Վեհ. Սուլթանի թիկնապահ Ալի Նիղամի փաշա, Պետական խորհրդոյ անդամներէն Ալի Ֆուատ պէյ, Թալիա շոգենաւով Եգիպտոս զրկուեցան. ասոնց ընկերակցած են Վեհ. Սուլթանի երկրորդ քարտուղար Գատրի և արտաքին գործոց պաշտօնատան թղթակցութեան պաշտօնեայ Սէֆեր և գնդապետ Սէյֆուլլահ էֆէնտինները:

Սոյն պաշտօնական ծանուցմամբ ըստ թամպուլի առջի օր այս մասին տուած տեղեկութիւնները կը հերքուին:

— Հազըգաթ ալ կըսէ թէ Խըտիլէն առնուած տեղեկութեանց համեմատ Եգիպտոսի յուզմունքը մեղմացած է, սակայն Եգիպտոսի ապահովութիւնը և Խտիլին շնորհուած բարձրագոյն հրովարտակին պահպանութիւնը Օսմանեան պետութեան համար անհրաժեշտ ըլլալով, այս առթիւ Վեհ. Սուլթանը Ալի Նիղամի փաշան և Գատրի պէյը մասնաւոր պաշտօնով Եգիպտոս զրկեն:

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
Առ Մեծ. Տ. Խ. Յ. Սարաճ

Պատուական բարեկամ,

Հայ մամուլին մէջ մի քանի տարիներէ հետէ կը կատարէք մի յատուկ դեր՝ արժանի երախտագիտութեան:

Ձերմ հայրենասէր և ճշմարտասէր, բարեկամ ողբին և ուղղութեան, «Հայրենիք» մէջ մի կորովի ոճով մատնանիշ կընէք Հայաստանի թշնամիներն, դիմակաղերձ կը խայտառակէք նենգաւորն ու խաբեբայն, կը դատափետէք յոռի ճաշակն ու վրոյնուրոյց ոճն, և Հայ ժողովրդեան յարգանքն ու սէրն կը հրաւիրէք առ այն ինչ որ ազգագուտ, որ արդար, որ բանաւոր է:

Մի օր «Հայրենիք» ի մէջ կատոնեան լեզուաւ շարաչար կը քննադատէիք մի շքեղաշուք հանդէս հարսանեաց և չկարէիք զսպել Ձեր վեհ զայրոյթ մտածելով այն ամեն շաղկապեալ վերայ որ ի դորձ գրուած էր անդ յուսմանս՝ մինչ անդին Հիւանդանոցին հասցի աղբիւրն կը ցամքէր . . . և ևս կարգաւոր կը ծափահարէի զՁեզ սրտիս խորէն և կը ուղէի կարել նոյն վայրկեանին համարուել Ձեր ճակատ:

Անցեալ օր Ձեր 1Ա «Մտածութիւն» նուիրած էիք մեր դպրոցի, Ենօրհակալ եւ մեզ ի սրտէ Ձեր պաշտպանութեան համար. շնորհակալ եմ Ձեզ զի Ձեր գրչաւ պատմութեան մէջ արձանագրեր էիք այն ճիգեր, այն նահատակութիւն որք ծնունդ տուին Պէրպերեան վարժարանի և զարգացուցին զնա, և զի հըրապարակաւ կը գնահատէիք նորա արժանիք իբրև ուսումնական հաստատութիւն և իբրև ազգային հաստատութիւն:

Ձեր ձայն այն առնական անսեթեթ ձայներէ է որք ժողովրդոց բարոյական ստորանկութեան ժամանակ կը լսուին բարեբաղդարար մերթ ընդ մերթ, և որք, ապացուցանելով թէ այդ ժողովրդոց մէջ չէ մեռած ամեն ճշմարիտ և ազնուական զգացումն և ջանալով զարթոցանել զամբոխն ծանրաբուն, յոյս կը ներշնչեն այնոցիկ որք ի վհատութիւն կը կործանէին:

Մեր վարժարանի վերայ կը շրջէր յանուն ազգային դաստիարակութեան և յանուն ընդհանուր դաստիարակութեան, և կը յայանէք այս համոզումն թէ՛ Հայ ժողովուրդն երկու տեսակէտով այլ պարտէր նախամեծար ընտրել մեր վարժարան քան զօտար դպրոցներն Պօլսոյ:

Համեստութեան գէժ չհամարիմ ըսել թէ իրաւունք ունիք. Հայ տղան մեր վարժարանի մէջ ո՛չ միայն իբրև Հայ լաւ կը կրթուի, այլ և իբրև մարդ. ոչ միայն կատանայ հայրենասիրական ըզգացումներու մշակումն և պատրաստութիւն ազգային շահուց սպասաւորման, այլ և մտաւոր և ֆիզիքական այնքան բարձր կրթութիւն որչափ կարելի է ըստանալ Պօլսոյ մէջ:

Վկայ մեր այն աշակերտք որք արդէն այլ և այլ ասպարէզներու մէջ պատին են մեր դպրոցի և յոյսն են ազգին:

Վկայ ինչ որ կը գրեն մեզ Եւրոպայէն մեր այն աշակերտք որք, նոյն իսկ մեր վարժարանի վերջին տարւոյ շրջանն չաւարտած, մեկնեցան ի Գաղիա, ի Զուիցերիա հետեւելու բարձրագոյն ուսմանց:

Պ. Յովհաննէս Կիւմչեան 1880 նոյ. 13 թուականաւ կը գրէր մեզ Տոմպալի երկրագործական վարժարանէն (Շաթօ տը Թոմպալէն, Նանսիի մօտ), «Տոմպալի դպրոցն քննութիւն մի անցուցի և ուրախութեամբ կը հաղորդեմ ձեզ թէ քաջ հանդիսացայ. և բնական էր որ հարցնէին ինձ թէ ո՞ր վարժարանն ստացած էի ուսմունքս. ուստի պարծանօք պատասխանեցի թէ Պէրպերեան սան մեմ»:

Պ. Ահարոն Մ. Մանուկեան 1881 օգոս. 12 ամսաթուով կը գրէ Նէօշաթէլէն. «Բաւական լաւ քննութիւն մի տուինք ուսմանց, մանաւանդ մաթեմատիքի . . . երբ յայտնեցինք մեր դասատուաց թէ մեր ուսումն Հայ վարժարանի մի մէջ առած եմք, շատ զարմացան . . . Մեր բացակայութեան ժամանակ զմեզ իբր բարի օրինակ կը ներկայացնեն մեր ընկերաց. ասելով թէ նորա աշխատասէր, կրթեալ և հանճարեղ ուսանողներու տիպարներ են, հետեւեցէք նոցա. Ձայս ամենն ոչ թէ զմեզ գովելու համար կը ըսեմ, այլ Ձեր փառքն աւելցնելոյ համար, ևն»:

Եւ որպէս զի գիտցուի թէ կանխաւ ստացուած ազգային ողբով մի կրթութիւն որքան կարեւոր է յօգուտ Ազգին բեղմնաւորելու համար Եւրոպական կատարելագործութիւնն, յառաջ կը բերեմաստ մի հատուած Պ. Ահարոնի եղբոր՝ Պ. Վահան Մ. Մանուկեանի Օգոստոս 19 թը. ուսականաւ նամակէն. « . . . թէ և թուղթի վերայ գրուած խօսքեր են սոքա այժմ, սակայն կապահովեմ զՁեզ թէ յապագային իրականութիւն պիտի գըտնեն, և ևս իսկ, մի տկար էակ թէ և, առանց նայելու իմ տկարութեան, պիտի ջանամ, պիտի ճգնիմ ի կրթութիւն ազգիս, Ձեզ նման ամեն խոչընդոտներու դէմ պիտի մաքառիմ և պիտի յարատեւեմ ձգտիլ յիմ նպատակ որ է Ձերն, և յայնժամ ևեթ արժանի պիտի լինիմ Վահան անուան . . . »

Այս հատուածք, զորս տառապէս կընդօրինակեմ մեր սանուց նամակներէն, բաւական են կարծեմ, յապացուցանել թէ մտաւոր կրթութեան և սըրտի մշակութեան մասին Պէրպերեան վարժարանն կատարելապէս կարող է զօհայնել Պօլսոյ մէջ մեր ամենէն զըժուարահաճ ծնողաց փափաքներն և պատասխանել Ազգին պիտոյից իբրև երկրորդական կրթութեան յատկացեալ հաստատութիւն:

Բայց բազումք մեր ծնողներէն քան զայս աւելի շօշափելի փաստեր կը պահանջեն, փաստեր որ աչաց խօսին և խտողեն զնոսա, փաստեր նիւթեղէն, փաստեր քարեղէն, որպիսիք են շէնքեր հոյակապ նման Ռոպերթ Գօլէճի, Յրէններուն և այլ օտարազգի վարժա-

րանաց շէնքերու. փաստեր որ ձայն հանեն նման այն ոսկւոյ դէզերուն զորս կը խառնեն այդ վարժարանաց տնօրէնութիւնք:

Մեր ազգ կը յարգէ միայն զայնս որք հարուստ են և ինոսա միայն կենթադրէ արժանիք. մարդոց մէջ հարուստներն են իմաստուն, դպրոցաց մէջ նոյնպէս հարուստներն են լաւագոյն. ահա՛ իւր տրամաբանութիւն:

Յաճախ կողբանք մեր Ազգի նիւթական աղքատութեան վերայ. բայց ես կը դտնեմ թէ մեր Ազգ. մտապէս աղքատ է մանաւանդ քան նիւթապէս, զի որպէս ամբրիկեան վայրենիք իւրեանց ոսկին կը փոխանակէին Եւրոպական ապակեղինաց և ուլանց հետ, նա կուտայ իւր հարստութիւն փոխան թերի և կապկային կրթութեանն զոր կը մատակարարեն Արևելից մէջ Եւրոպական և Ամերիկեան հաստատութիւնք, և ըստուներին զոր իւր վերայ կը ձգեն նոցա յօղթ շէնքեր, և միամտին կառնուն ոսկին և կը խնդան քթին:

Եւ յետոյ, ծայրայեղ փոփոխութիւն է նա, նման տղայոց, շուտ կը ձանձրանայ միօրինակութենէ, յարատեւելէ, մի հողոյ մէջ մի բոյս տնկելէ յետոյ կը պահանջէ որ իսկոյն ուսմանայ և պողաբերի այն, և այս նպատակի հասնիլ կը կարծէ նա շուտ շուտ տեղափոխելով զտունին հողէ ի հող, որոյ արդիւնք ոչ այլ ինչ կը լինի բայց եթէ բուսոյ փրտտումն իսպառ:

Ո՛հ, այս ազգ շատ խրատի կարօտութիւն ունի, շատ խելքի պէտք ունի տակաւին:

Հրապարակագիրք չեն կարող չափազանց գրել նորա պիտոյից, նորա շահուց վերայ, և չեն կարող չափազանց խիստ լեզուաւ հարուածել նորա թերութիւններ և չափազանց ուժգին յնջել զնա, որպէս զի արթննայ ի պայծառ տեսութիւն վհին որ կորուստ կապառնայ նմա:

Գրեցէք, աղիւ Սարաճ, քարոզեցէք ճշմարտութիւնն այս այնքան արգահատելի որչափ լուսազիրկ ժողովրդեան, և իցիւ Ձեր և Ձեր նմանեաց զօրաւոր ձայներ ազգէին նմա, և ճանչէր իւր շահ և իւր փլաս, զայն որ կը խարէ ըշնա և զայն որ կը ծառայէ նմա:

Սղգ կը սեղմէ ջերմագին
Քոյդ. Ռ. Յ. Պէրպերեան
1881 սեպտ. 20

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՕՐՄԱ	
Օսմ. Գօնասլիտ Գոցուեցաւ երէկ իրիկուն	16-16
» » Բացուեցաւ այս առաւօտ	16-39
ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵՂԹՈՅ	
Սօսիթէ մէնէրալ Անգղ. Լիբ.	5-16
» Օթօման »	4-10
Կ. Պօլսոյ Պանքան »	12-
Քրէտի Ժէնէրայ »	7-14
Փոխ. 1863 (Մութոն) »	-
» 1863 (Մութոն) »	88-20
» 1869 (Բինար) »	87-21
» 1872 (Պօն տիւ թրէզօր) »	28-20
» 1873 (Բինար) »	87-
Թրամկայ Օսմ. Լիբ.	3- 85
Թղթադրամ »	1070
Բուժիկի երկաթուղի Ֆրանք	49-
Լաւրիում »	147-
ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՅ	
(Օսմ. ոսկին 100 դրոպոշէն)	
Անգղիկն. ոսկի 109-13	Գարպօն արծա. 91-
Գաղղիական » 87- 2	Մէճիտիէ 107-16
Բօլ » 89-20	Վեցնոց 124-30
Քրէտից » 51- 5	Հինգնոց 207-20
Գարպօն թուղթ 8-60	Մէթալիք 204-20

... Խմբագրապետ Տէր,

Ազգային երևելի փաստաբաններէն Մաստիչեան Մեծ. Յովհաննէս էֆէնտի, երկու անձանց մէջ եղած դատի մը պատճառաւ իրաւախօհութիւն գոյացընելուն առթիւ, ի նպաստ Ազգ. Հիւանդանոցի հինգ Օսմ. լիւր ստացած ըլլալով, գայն յուղարկած է մեզ, որոյ համար Հոգաբարձութիւնս նորին Մեծապատուութեան սոյն ազգասիրական գործոյն համար իւր խորին շնորհակալութիւնն կը յայտնէ հրապարակաւ:

Խնդրեմք... Խմբագրապետ Տէր, որ ներկայս Ձեր պատուական լրագրոյն յառաջիկայ թուոյն մէջ հիւրընկալել բարեհաճիք կանխաւ ընդունելով մեր յարգանաց հաւաստին:

Ի Դիմաց Հիւանդ. Հոգաբարձութ. Ատենադպիր Ատենապետ Յ. Ֆէնէրճեան Մ. Յակօբեան 22 սեպտ. 1884 Գրաս. Ազգ. Հիւանդ. Կ. Պօլիս

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՁԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԱՆՈՐԴ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ

Հեղինակ Տօթթօր Է. Դլէման Բարիզի բժշկական ճեմարանէն. Թարգմանեց 1877ի տպագրութենէն Ե. Արմաւիր: Թէ ինչ պէտք է դիտան ամուսնացողք իրենց ամուսնութեան նախընթաց օրը. — Ինքզինք սիրցնելու միջոցները. — Ամուսնութեան ազդեցութիւնն ամուսնոց ֆիզիքականին և բարոյականին վերայ. — Ծննդական գործարանաց առողջարանութիւն. — Անկարողութիւն և իւր դարմանները. և ին. և ին:

Սոյն խիստ օգտակար գիրքը որ թէ ամուսնացելոց և թէ ամուսնութեան պատրաստողներու ընթերցման անհրաժեշտ է կը ծախուի ամէն գրավաճառի քով. Գին 8 զուրուշ:

ԿՐԹՈՒԹԻՒՆ ՏՍՃԿ ԼԵՁՈՒԻ Պ. Պ. ԳԱԼԸՊՃԵԱՆԻ

Հեղինակին սոյն գործն երրորդ անգամ տպագրուած է Միւհէնտիսեան ընտիր տառերով, յանուն « հեզարան և ընթերցարան Օսմ. լեզուի »:

Գին 5 զուրուշ
Կը գտնուի ամեն Հոյ գրավաճառաց քով. կեդրոնատեղին է Գավաֆեան գրատուն:

ԱՆԳՂԻԵՐԻՆ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ

Խօսիլ, կարգալ, դրել, վեց ամուսնան մէջ, ամեն օր մէկ մէկ ժամ դասատուութեամբ հետևեալ տեղերը, հետևեալ ժամերու մէջ:

Ուզուն չարչուի մօտ Սէրասկէրի ճատէն Միքայէլ աղային ընթերցարանը առաւօտուն ժամը 12ը և 5 րոպէ անցած:

Սիրքէճի իսկէլէսին թիւ 72 մաղաղան ժամը 3ին:

Յըլըճի փողոց թիւ 38, իգական սեռի համար ժամը 8ին:

Նիչանճի Սուրէնեան վարժարան ժամը 9ին:

Յըլըճի փողոց թիւ 38 արական սեռի համար գիշեր ժամը 2ին:

Դասատուութեան պայմանաց համար պէտք է դիմել Ուզուն չարչուի գլուխ Յրէնկեան գրատուն թ. 362:

Բ. Վարդուկեան

Ա Ջ Գ

Սիկարի թղթին ընտրելագոյնն է՝ Ռուպէնսօն անուանեալ Պրազիլիոյ թուղթը, որ կը գտնուի Տէմիրգարուկեան եղբարց վաճառատներն ի Ղալաթիա և ի Պօլիս, և Ֆրէնկեան գրատունն:

Ն. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Ջ Ո Ւ

Գ. հատոր

Սոյն դասագրքին Գ. և վերջին հատորն ալ իւրոյս ընծայուած է, Պօլսոյ աշխարհաբառի վերածուած և ընտիր տպագրութեամբ: Գին 5 դահեկան արծաթ:

Կեդրոնատեղին է Միացեալ ընկերութեանց գրասենեակն, Կալաթա, Գէօղէ-օղլու խան, թիւ 11, 12, և 13:

Կը գտնուի Պօլսոյ բոլոր հայ գրավաճառաց քով, նաև Կալաթա, Պ. Յ. Չաքըրեանի հայկական թղթավաճառանոցը:

Դպրոցաց համար մասնաւոր զեղչ կըլուի:

Ա Ջ Գ

Գումարու Հիսար տիպի Աճէմ տաղի կոչուած տեղը «Միութիւն (Էնօսիս)» անուն ծովեղերեայ համագրային գրասարան մը բացուած է ուր թէ եւրոպական և թէ տաճկական նուագածուններ կը նուագեն ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերը:

Յաճախորդք թէ ծովեղերեայ դիրքին, թէ ըմպելեաց մարքութեան և թէ հանգստութեան մասին շատ գոհ կըլլան: Ուզողը կրնայ փորձել:



ՊԱՃԵՊԱՆ ՕՂՈՒ ԿԷ ԳՈՍՄ. Ստամբուլ Բիզա փաշա խան Ե: 3

ԳՈՐԾԱՐԱՆ ՍԻԿԱՐԻ ԹՂԹԻ

Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ ԲԻՋԱ ՓԱՇԱ ԽԱՆ Թ. 3

Այս անունով նոր գործարան մը բացուած է Բիզա փաշա խան թիւ 3 սենեակը, ուր կը պատրաստուին խիստ մեծ խնամով և աման գնով ամէն տեսակ աղիւթ թուղթ Մարսիլիա յէն յատկապէս բերուած ընտիր տեսակաց վրայ:

Գործարանի վարչութիւնը պատրաստ է մարքադալքս պատուած գօմիսիօնիներու հետ բանակցիլ և անոնց ուղած տեսակաւ թուղթ պատրաստել. նոյնպէս պատրաստ է գաւառներէն այս մասին յանձնարարութիւններ ընդունիլ և սրտեալ ժամանակին յանձնել, ինչ քանակութեամբ որ ուզեն:

Վարչութիւնս սոյն ձեռնարկութեան հետ լարեղծութիւնն ալ միայնել ուղիւղով, որոշած է վաճառման արդիւնքին 5 առ 0,0 ը Ազգ. Հիւանդանոցին և Միացեալ ընկերութեան նուիրել կէս առ կէս:

Վարչութիւնս կը յուսայ որ ճաշակի տէր և ազգային կարեւոր հաստատութեանց նըպաստելու փափաք ունեցող ազգայինք պիտի փութան առևտուրի փորձ մ'ընել սոյն գործարանին հետ, զորս ըստ ամենայնի գոհ ընելու համար ջանք և աշխատութիւն չպիտի պակսին:

Կը ծախուի ամէն ծխախառնաց քով և կեդրոնատեղին է Բիզա փաշա խան թիւ 3 սենեակը Ս. Ղ. Պարտիչպանեան և Ընկ. Գործարանը:

ՅԱՆԿ ԳՐՈՅ Ի ՏՊԱՐԱՆԻ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Ղ. Փոյ. Վարժութիւն ճայնաւոր մանկանց 6 Նկարագիր երգոց հայաստանեայց եկեղեցոյ 3 Օստիանու քերթուած 2 Ո՛վ է մեղաւոր կանանց վերա-

բերեալ 1 20 Հանգուցեալ Պ. Ե. Մ. Տնտեսեան տպարանէն իւրոյս ընծայուած վերոյիշեալ գրքերը կը վաճառուին իրենց գիներովը հատով առնողի համար իսկ 10 ուլ առնողի զեղչ կը լինի: Կեդրոնատեղին է Պահճէ քարու մաքսատան կարգը կամուրջի մօտ Ս. Յ. Փափազեան գրատունը. թիւ 56:

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԱԹԷՆՍ ԵՒ Ի ՉՄԻՌՈՒՆ

Հանդերձ դիտողութեամբ նկարագրեաց Յ. Գուրգէն:

Պատմական տեղեկութիւններ պարունակող ընտիր գրքոյի մ'է խիստ յարմար դպրոցական պարգեւաբաշխութեանց որոյ 50 օրինակին գինը Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցին յատկացեալ է:

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով ի գին 6 զուրուշ:

Կեդրոնատեղին է Արամեան գրատունը:

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ՆԻՃԷՆԻՍԱՌՏԻ ԳՕՆԹԻ ԵՂԵԱՐԲ ԵՒ ԵԱՂԻՆԻ

109 Ղալաթա. Սանդղճըլար փողոց 109

Ստորագրեալքս առևտրական բոլոր պատասխանատուութիւնը մեր վրայ առնելով Գօնթի եղբարց և Եանիմի հետ ընկերութեամբ Ղալաթիոյ Սանդղճըլար փողոց թիւ 130 գործատունն հաստատուեալ լինի արժանապէս քաջալերու եցանք պատուարժան յաճախորդաց բաղմունքներն: Ամէն ոք լաւ գնահատեց մեր գործարանէն ելած ծխախոտայն ընտրութիւնը, ճաշակը և գիններուն չափաւորութիւնը տեսակներուն համեմատութեամբ: Ուստի և մեզ հարկ եղաւ, աւելի ընդարձակ ասպարէզ մը տալ մեր գործատուութեանց:

Եւ նախ մեր գործարանն ու վաճառատունը փոխադրեցինք առաջնոյն զխոսքը 109 թիւ շէնքին մէջ, և իւր անհամեմատ ընդարձակութեամբ խիստ յարմարութիւն ունի թէ մարքադալքս թէ գաւառներէն և թէ օտար երկիրներէ եկած բաղմամբ հըրամաններն յոյժ գոհացուցիչ կերպիւ և փութով կատարելու:

Երկրորդ ծխախոտայ բերքն արտադրող ամեն կողմ և և մանաւանդ յէնիճէ յատուկ գործակալներ կարգելով սկսած ենք մասնաւոր խնամք պատրաստել տալ բերքը և ահա այս խնամոց և գոհողութեանց շնորհիւ է որ այսօր ամենընտիր և հոտաէտ ծխախոտներ կարող ենք մատակարարել նաև 150 նոց, 200 նոց, և 300 նոց և աւելի բարձր գիներով ըստ տեսակին:

Այսուհետև ոչ ոք պիտի վարանի իւր ճաշակին յարմար ընտիր ծխախոտ գտնելու մասին, բաւական է զիմեյ մեր վերոյիշեալ գործատունն ի Ղալաթիա Սանդղճըլար փողոց թիւ 109, և կամ ամեն ծխախառններէ խնդրել մեր գործարանէն ելած ասպարաններէն:

Ծան. Օտար երկիրներէ ասպարէք ուզողները կը մասնակցին այն մենաշնորհին, զոր ունիմք կայսերական կառավարութենէն, որ է պանտրօլի տուրքէն ազատ ըլլալ, որով 0/0 ին 20 շահ կունենան:

Վաճառատուներն են. Ղալաթիա Սանդղճըլար թիւ 109 Չընտան գարու 2էօմէկէճիէր » 29 Էմին-Էօնիւ » 56

ՏԵՄԻՐԳԱՓՈՒԼԵԱՆ ԵՂԱՐԲ

ՏԷՐ-ԽՍԷԱԳԻՐ Մ. Յ ՄԵՂԻՔԵԱՆ

Բիզա փաշա խան թիւ 14